

# Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

## 12-2-ՔՀ6-Ղ5-1 Բաժնի պետ

### 1. Ընդհանուր դրույթներ

#### 1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Բաժնի պետ, (12-2-ՔՀ6-Ղ5-1)

#### 1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Հիմնարկի պետին:

#### 1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

#### 1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր իրավաբաններից մեկը կամ Բաժնի գլխավոր հոգեբաններից մեկը կամ Բաժնի գլխավոր սոցիալական աշխատողներից մեկը:

#### 1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Էջմիածին, Չոբանքարա

### 2. Պաշտոնի բնութագիր

#### 2.1 Աշխատանքի բնույթը (գործառնություններ), Իրավունքները, Պարտականությունները

- ապահովում է Հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների օգտակար զբաղվածությանն ուղղված նախաձեռնությունների զարգացման և իրականացման աշխատանքները:
- կազմակերպում է կալանավորված անձանց և դատապարտյալների կրթությունը և մասնագիտական պատրաստվածությունն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների իրականացումը:
- ապահովում է դատապարտյալների և կալանավորված անձանց մոտ օրինապահ վարքագիծ ձևավորելու նպատակով կազմվող սոցիալական և հոգեբանական ծրագրերի կազմման աշխատանքները՝ համագործակցելով հասարակական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:
- ապահովում է դատապարտյալների մեկուսացվածության աստիճանի փոփոխման վերաբերյալ կազմված փաստաթղթերի ուսումնասիրությունը:
- ապահովում է դատապարտյալների ներման խնդրագրերի վերաբերյալ նյութերի կազմումը:

#### Իրավունքները.

1. ուսումնասիրությունն իրականացնելու արդյունքներով, ըստ անհրաժեշտության, համապատասխան առաջարկություններ ներկայացնել Հիմնարկի պետին կամ նրա՝ տվյալ ոլորտը համակարգող տեղակալին՝ կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացմանն առնչվող օրենսդրության կատարելագործման կամ աշխատանքներում առկա թերությունները վերացնելու կամ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ.
2. ուսումնասիրել դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ գեկույցները և վերահսկել դրանց ժամանակին և ճշգրիտ կազմումը.
3. կալանավորված անձանց և դատապարտյալների դիմումների հիման վրա կատարել կալանավորված անձանց և դատապարտյալների անհատական ընդունելություն և իրականացնել համապատասխան խորհրդատվություն.
4. կազմակերպել քաղաքացիների ընդունելություն.
5. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն.
6. համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ:

### **Պարտականությունները.**

1. առաջարկություններ ներկայացնել Հիմնարկի պետին կալանավորված անձանց և դատապարտյալների հետ տարվող աշխատանքների կատարելագործման վերաբերյալ
2. վերահսկողություն իրականացնել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ անցկացվող սոցիալական, հոգեբանական և հոգեբանական աշխատանքների կազմակերպման և կատարման նկատմամբ.
3. Հիմնարկի պետին ներկայացնել կալանավորված անձի կամ դատապարտյալի հոգեբանական և այլ առանձնահատկություններով պայմանավորված, մյուս ստորաբաժանումների հետ համաձայնեցված, համատեղելիության վերաբերյալ միջնորդություն.

## **3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

### **3.1 Կրթություն, որակավորման աստիճանը**

1.	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ	Գործարարություն, վարչարարություն և իրավունք	Առողջապահություն և սոցիալական աշխատանք
2.	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ	Գործարարություն և վարչարարություն	Սոցիալական աշխատանք
3.	Ենթաօլորտ	Սոցիոլոգիա	Հոգեբանություն և վարչարարություն	Սոցիալական աշխատանք

				042101.0	
				0.6.	
				Իրավագ	
				խտություն	
				ն կամ	Սոցիալական
4.	Մասնագ	Հոգեբա-	Կառավարում		ն
	խտություն	նություն		042101.0	աշխատանք
				0.7.	
				Իրավագ	
				խտություն	
				ն	

### 3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

### 3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ հոգեբանության, կամ սոցիալական բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

### 3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Աշխատակազմի կառավարում (կատարողականի կառավարում)
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Զաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

## 4 Կազմակերպական շրջանակ

### 4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի՝ մարզերում, համայնքներում և վարչական շրջաններում տեղակայված կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

### 4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի՝ մարզերում, համայնքներում և վարչական շրջաններում տեղակայված կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

#### **4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

#### **4.4 Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

#### **4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: